

Ֆրանսիական զենքերակները մէջ Ֆարրից աւելի ընդունակներ և եռանդուններ կան և որ Ալժիրիայի համար Ալբեր Գրեվից աւելի յարմար կառավարիչ կարելի էր գտնել Բայց այն հարցը, թէ Ֆրանսիական նշանաւոր շահերը ի՞նչ են գտնուում այժմ միջակ ընդունակութիւնների տէր, թէ կայտ և չափից դուրս պատուաւոր և բարեխիղճ մարդկերանց ձև քին, բողոքովն այնպէս չէ միջոցում, ինչպէս մտածում են բծնապարտեանները և այլ միապետականները։ Այդ հարցը անվճիռ մնաց մինչև անգամ պատգամաւորների ժողովի վիճարանութիւնների ժամանակ։

Ֆրանսիայի մէջ շատ լաւ հասկանում են այն իսկական պատճառները, որոնք ստիպում են կառավարութեանը ընտրել զենքերայ Ֆարրի նման պատերազմական մինիստրներ և Ալբեր Գրեվի նման նահանգապետներ։ Ֆրանսիական հանրապետութիւնը իր աստ ասորայ գոյութեան ժամանակ, խաղաղութիւն պահպանելով, չէր կարողացաւ ստեղծել հանրապետական զենքերակներ։ Մի և նոյն ժամանակ անկարելի է իշխանութիւնը տալ մարշալ Կոնրոբերի և Մակ-Մասոնի նման մարտիկանց, որոնք Ֆրանսիական պետական այժմեան կազմակերպութեան բացարձակ թշնամիներ են։ Ֆրանսիայի մէջ այժմ շատ քիչ հանրապետական գնդակայներ կան, որովհետև նրանց պէտք էր ընտրել այն երիտասարդ օֆիցիրներին, որոնք գերազանցակցան Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ։ Գնդակայ Ֆարր սրանց թիւին է և զարմանալի չէ, որ նա վարում է պատերազմական մինիստրի նշանաւոր պաշտօնը։ Մինչև հունիսի արշաւանքի ըսկեքը նա համապատասխանում էր իր կոչմանը, բայց Ալժիրիայի մէջ պատահած անաջողութիւնները ցոյց տուին Ֆրանսիայի պատերազմական վարչութեան պակասութիւնները։

Ի՞նչ է պատճառը, որ Ֆրանսիական զենքերակների մէջ շատ քիչ հանրապետականներ կան, որոնցից կառավարութիւնը առանց երկիւղ կրելու կարողանար ազատ ընտրութիւն անել։ Ֆրանսիական զինուորականներին սէրը զէպի միապետական ըսկեքունքները նրանով է մեկնվում, որ հանրապետութիւնը փառաւոր ընծաներ և վարձատրութիւններ չէ տալիս, որոնք զարգացնում են զինուորականների փառասիրութիւնը։

Հանրապետութիւնը առհասարակ մի խաղաղասէր կառավարութիւն է։ Նա չէ բացանում պատերազմական մարդկերանց առաջ մեծ ասպարէզ, չէ տալիս բարձր տիրուղաներ և կարեւորական վարձատրութիւններ։ Այդ է պատճառը, որ Ֆրանսիական զօրքերի կառավարութիւնը յանձնված է համեստ զենքերայ Ֆարրին, իսկ Ալժիրիայի գլխաւորահանգապետի գծուար պարտականութիւնները կատարում է կարինետական գործիչ Ալբեր Գրեվի։ Հանրապետական պատերազմական գործիչները նոր սերունդը զեռ չէ կարողացել փոխարինել պատերազմական այն մարդկերանց, որոնց Ֆրանսիական հանրապետութիւնը ժառանգել է միապետական կառավարութիւններից։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Յուլիս ամիսը անմոռաց կը մնայ աւստրիական խմբագրութիւնների համար, որովհետև այդ ամսվայ ընթացքում չափազանց շատ լրագիրներ արգելվեցան և կտրուեաւ որովեցան։ Պրագայի մէջ կատարված անկարգութիւններից յետոյ երկու շաբաթվայ

ընթացքում ոչ մի օր չէ պատահել, որ 6—8 լրագիրներ չը կախաւորվէին։ Չեխիայի և Մորաւիայի մէջ մօտ 40 լրագիրներ են կախաւորված։ Այսպիսի հալածանք զէպի մամուլը երբէք պատահած չէ։ Կառավարութիւնը, ինչպէս երևում է, բաժանում է կիսապաշտօնական լրագիրների այն կարծիքը, որ Պրագայի մէջ պատահած վերջին անկարգութիւնների պատճառները լրագրական ցոյցերն էին և այդ հիման վրա նա վճռել է վերջ դնել այդ ցոյցերին, խըտութեամբ վարվելով խմբագրութիւնների հետ։

ձմարիտ է, Չեխիայի քաղաքական կուսակցութիւնները օգուտ էին քաղում լրագրական խօսքից ազգային կրքերը վարդացնելու համար, բայց բացառապէս այդպիսի վարմունքը անկարող էր միակ պատճառից Պրագայի մէջ կատարված փողոցային անկարգութիւնների։

Պրագայի անկարգութիւնների ժամանակ մօտ 70 գերմանացի պատգամաւորներ հաւաքվեցին և մի ազդարարութիւն կազմեցին, որ ուղղված էր Աւստրիայի գերմանական ազգաբնակչութեանը։ Այդ ազդարարութիւնը խտուրթեամբ յարձակվում է կառավարչական քաղաքականութեան վրա և հրահրում է ազգաբնակչութեանը պատրաստվել սովոնոմիստներին ընդդիմադրելու համար։ Նոյն բովանդակութեան ազդարարութիւն կազմեցին չեխական պատգամաւորները։ Կառավարութիւնը ոչ մի խտուրթիւն գործ չը դրեց դրանց վերաբերութեամբ և պատժեց միայն այն լրագիրներին, որոնք տպեցին այդ ազդարարութիւնները։ Վիեննայի քաղաքային խորհուրդը մի վճիռ կայացրեց, որ պարտաւորում է կառավարութեան գործողութիւնները Պրագայի անկարգութիւնների ժամանակ խորհուրդը ոչինչ պատիժ չը կրեց, այլ պատժեցան այն լրագիրները, որոնք տպեցին այդ վճիռը։

Չեխական նոր փոխարքայ Շտրաուս ընդունեց տեղական մասնաժողովների անդամներին, որոնց ճառերին հետեւեալ պատասխանը տուեց։ «Իբրև աւստրիական զենքերայ ես պարտաւոր եմ առհասարակ ոչ մի քաղաքականութեանը չը մասնակցել և մտնաւնդ կուսակցական քաղաքականութեանը։ Ես միատեսակ բարի դիտաւորութիւններ ունեմ թէ չեխերի և թէ գերմանացիների վերաբերութեամբ։ Այժմեան օրէնքները իմ միակ առաջնորդներ կը լինեն ազգային սկզբունքները զատելու ժամանակ, որոնց ես յարգում եմ։ Իմ գործունէութեան գլխաւոր նպատակն այն է, որ ազգութիւնները եղբայրաբար համաձայն ապրեն։ Կուսակցութիւնների թշնամական գործողութիւններին ես խըտութեամբ կը վերաբերվեմ, բայց միատեսակ իրաւացի կը լինեմ երկու կողմերի հետ»։

ԱՆԳՂԻԱ

Կայուածական օրէնքի քննութիւնը երկու շուտով կը վերջանայ։ Անգլիական կառավարութիւնը հաւատացած է, որ այդ օրէնքը կընդունվի և լորդերի ժողովից, և այդ պատճառով պատրաստութիւններ է տեսնում օրէնքը գործադրելու համար։ Այժմ նա զբաղված է այն երեք հաւատարմատարներին ընտրութեամբ, որոնք պէտք է մասնակցեն կալուածական գաղութներին, որ Նրլանդիայի մէջ վերանորոգութիւններ մտցնելու համար գլխաւոր գործիք կը լինի Շուտով այդ երեք անդամները

րի անունները կը յայտնվեն պարլամենտին։ «Times» լրագրին Հնդկաստանից հաղորդում են, որ Էյլեր-խան հասել է Հայդերաբադ։ Աֆղանական էմիրի զօրքերը ուղեւորվում են զէպի կանդազար և Գիրշիկի Յայտնի չէ էմիրը հեռացել է Կարուլից, թէ զեռ ևս այնտեղ է։ Կարծում են, որ այժմ Հերատի մէջ բողոքովն զօրքեր չը կան և եթէ էմիրի զօրքերը այժմ յարձակվեն Հերատի վրա, Էյլեր-խան շատ կը դժուարանայ։ Գժուար է ներթափրլ, որ Աբդուրահմանի նման մի փորձված զօրապետ օգուտ չը քաղէ այդ հանգամանքից։ Անգլիական նախկին զեռպետը Կ. Պոլսի մէջ, Գօշէն մի հաշիւ ներկայացրեց իր ընտրողներին իր գործունէութեան մասին։ Նրա ունկնդիրները իմացան, որ բաւական դժուար և ծանր բանակցութիւնների ժամանակ Բ. Կրան հետ, մեծ պետութիւնների ներկայացուցիչները համաձայնութիւն պահպանեցին և միաբանութեամբ ձգտում էին պահպանել խաղաղութիւնը Արևելքի մէջ։ Այդ ճառի մէջ նշանաւորն այն էր, որ Գօշէն չափազանց դուրս էր Աւստրիայի գործունէութիւնը։ Գեսպանը չէ նկատել, որ Աւստրիան նուաձողական նպատակներ ունենար Թիւրքիայի վերաբերութեամբ։ Անգլիան աշխատել է Գերմանիայի հետ համաձայնութեամբ գործել այդ պետութիւնների մէջ որոշված նախագծի համեմատ Բանակցութիւնների ղեկավարութիւնը յանձն է առել իշխան Բիսմարկ Անգլիայի առաջարկութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրների մէջ կարդում ենք, որ Ֆրանս-Յուլիսի կայսրը կը տեսնվի Վիեննա կայսրի հետ Գաշտէյնում, յուլիսի վերջերին, ինչպէս որ պաշտօնապէս կարգադրված է։ Երկու պետութիւնների մինիստրական օրգանները հաստատում են, որ այդ տեսութիւնը միայն քաղաքավարութեան և անձնական բարեկամութեան հետեւանք է, առանց որ և է քաղաքական շարժառիթների։ Աւստրիայի և Գերմանիայի բարեկամութիւնը արդէն կատարված իրողութիւն է, և այդ բարեկամական կապերը չեն կարող սրանից ամուր կապված լինել։ Այնու ամենայնիւ չը կայ ծուխ առանց կրակի, և շատերը հաւատացած են, որ Գաշտէյնում կը կատարվեն բարեկամական բանակցութիւններ քաղաքական նշանաւոր հարցերի վերաբերութեամբ, մանաւանդ որ բարձր չայմբել և իշխան Բիսմարկի դիտաւորութիւն ունէին տեսակցել միմեանց հետ Աւստրո-Ունգարիայի արևելեան պրօզրամայի մի քանի կառկածերի կէտերի մասին անձնապէս բացատրութիւններ տալու համար։

—Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը վճեց արտաքին Ֆրանսիայի մի քանի կարխաներին, որոնք նոր ապստամբութիւն էին պատրաստում Ալպանիայի մէջ։

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ փարիզի քաղաքային խորհրդում հակասեմական առաջին փորձն արվեցաւ։ Խորհրդի պահպանողական անդամներից մէկը մասնաձեռն արաւ չորէական կրօնական պրօպագանդայի վրա քաղաքային ուսումնարաններում Յայտնվեցաւ, որ Բօտշիլդէն երի տունը այս տարի իր սրբանոցներում և ուսումնարաններում նախկին տարիներից աւելի շատ երեխաներ է ընդունում, և այդպիսով օգնում է և բազմաթիւ ծնողներին։ Այս «զգալանիքը» բացվեցաւ և առիթ տուեց վերալինել պահպանողական անդամներ մերկացնելու։ Իրական վտանգաւոր պրօպագանդան։ Այդ մերկացումը այնու ամենայնիւ, առանց հետեւանքի մնաց։

—Կ. Պոլսից գրում են լրագիրներին, որ Սուլթանը յետաձգեց պետական յանցագործների դատարանը մինչև բայրամի տոների վերջը։ Այդ ժամանակամիջոցում կը հրատարակվի իշխան Եւսուֆ-Կալիբի մէկ գրութիւն, որից կերևայ թէ նախկին սուլթան Մուրադը անձաւա տուելու

թեամբ հալածում էր Աբդու-Վալիդի ընտանիքը։ Չմիւռնիայում բանտարկված Մեհմեդ-Բուշուֆաջայի դրութիւնը այն աստիճան վատացաւ, որ շուտով սպանելի է նրա մահը։

—«Daily News» լրագրին հաղորդում են, որ Միդհատ-փաշա վճեց անձնասպանութիւն գործելու։ Նա փորձեց իր երակները մկրատով կտրել, ապացուցելու համար այդպիսի ինքնասպանութեան կարելութիւնը։ Նրան արգելեցին, և սուլթանը, կանչելով նրան իր մօտ, իր ցաւակցութիւնը յայտնեց նրա դիտաւորութեան մասին։ Միդհատը պատասխանեց, որ իր կեանքը անօգուտ է դարձել և խնդրում է միայն մէկ ողորմութիւն՝ կախելու տեղ՝ հրացանազարկ անել նրան։

—Փարիզից հեռագրում են, որ պատգամաւորների ժողովը ընդունեց պարտաւոր ուսման օրինակի, մերժելով սենատի արած փոփոխութիւնները։

—Կ. Պոլսից «Голосъ» լրագրին հեռագրում են, յուլիսի 24-ին, որ նախկին սուլթան Աբդու-Վալիդի սպանութեան մէջ մասնակցող բոլոր անձանց մահուան պատիժը փոխարինված է բանտարկութեամբ։

—Հռօմից «Daily News» լրագրին, յուլիսի 21-ից հեռագրում են հետեւեալը. «Երէկ, երեկոյան—Մարգարիտա թագուհու անուանակոչութեան օրը—պատիւ նորա ցոյցեր եղան։ Անգլիան բազմութիւնը, առջից երեք գոյնի դերօշակը տանելով և օղբ աղմկելով հաւատարիմ հպատակութեան բացականչութիւններով, կանգնում էր կղերական արխատօրատիայի սնկերի առաջ (թող կորչեն կղերականները) աղաղակներով, և յետոյ երկույեան մօտ տասը ժամին ամբողջ «Piazza Colonna»-ից շարժվեց զէպի Կապիտօլը, ուր սինիօր Արմիլինի, որը քաղաքազարի պաշտօն է կատարում, կարդաց թագուհուց ստացած հեռագիրը որպէս պատասխան քաղաքային խորհրդի կողմից նրան մատուցած նորահարկութեան։ Չը նայելով որ Արմիլինի խրատեց ամբողջին հակակղերական ցոյցերը վերջացնել, որ յուլիսի 12-ից այստեղ ամեն երեկոյ կը կրկնվէ, ամբողջ աղաղակեց. «Թող կորչեն կղերականները»։ Յետ գալու ժամանակ գերմանական զեռպետան ասաջ անցնելով, որ լուսաւորված էր, ամբողջ աղաղակեց. «Կեցցեն մեր բարեկամները»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդօնում, յուլիսի 19-ի գիշերը, մեռաւ Ուլտամիտտերեան Միաբանութեան յայտնի զէպան Ստէնլի։

Տուրիսի լիտօր Մուստաֆա-Բէկ-Իզմայլի մէկ եկեղեցի նախկին ժամանակ փարիզում, Բէյ աբդուլային ընծայեց 500 Ֆրանկ եկեղեցու պէտքերի համար։ Արեգան չը կարողացաւ իր գործմանքը չը յայտնել, յագուտ քրիստոնէական եկեղեցու այդպիսի դոնորութեան ստիճով մէկ մասնաւորների կողմից։ Մուստաֆան փոխաբայրար նկատեց արեղային։ Երբ որ կրօնները զանազան ճանապարհներով դիմում են մէկ նպատակի,—յարգուք սերմանեց. զէպի բարձրագոյն էակը և մարդկային ցեղի լուսացնելուն Միւս աշխարհում մենք բոլորս մէկ ենք։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի. «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհին, երէկ, յուլիսի 20-ին ճողոտութեամբ բարեհաճեցին Նիժնի-Նովոգորօզ հասնել և այնչեղին նոր մայր-եկեղեցին տօնաւաճառի վրա։ Մայր-եկեղեցին երէկ օձվեցաւ։ Կայսրի և կայսրուհու ճանապարհորդութեան ժամանակ ժողովրդի հիացումը անկարագրելի էր։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ երէկ զենքերայ Սկորօլով հասաւ Ս. Պետերբուրգ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 1/2 կ., երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 1/2 կ., չորրորդ 94 ռ. 12 1/2 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 226 ռ., երկրորդ 224 ռ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 87 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 91 ռ. 75 կ., ոսկի 7 ռ. 78 կ.։ Թուսաց 1 բուրլ Լօնդօնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 87 պֆ., փարիզի վրա արժէ 270 Ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ